

**ԶԱՐՏՈՆԿ** -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝

**www.zartonkdaily.com**

հնչալեւ նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեան հետեւեալ հասցեներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com  
zartonkdaily@yahoo.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

# ԶԱՐՏՈՆԿ

*Օրաթերթ*

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN

Հարտոնկ Երեսօրէն Բարձր Գրական Գործունէութեան

77րդ Տարի, թիւ 149 (21,390) ԸՍՐԱԹ, 11 ՅՈՒՆԻՍ 2015 4 էջ 1000 L.O.

1915-2015 Հայոց Յիշատակութեան 100-րդ տարեկից

Remember and Demand

ԿՐ ՅԻՇԵՆ ԵՒ ԿՐ ՊԱՅԱՆՁԵՄ

Je me souviens et j'exige

أتأذكّر وأطالب



**Լիբանանեան Լուրեր**

## Կառավարութեան Նիստի Ընթացքին Պատահածը՝ Կանխամտածուած

Երէկ առաւօտեան, արտաքին գործոց նախարար Ժըպարան Պասիլ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին Նշեց, որ կառավարութեան նիստին ընթացքին տեղի ունեցածը իրենց կողմէ կանխամտածուած քայլ մըն էր, որպէսզի լրատուամիջոցներուն առջեւ դիրքորոշում մը որդեգրուի եւ պատգամ մը փոխանցուի:

Միւս կողմէ հանդարտութեան կոչերը բազմացան, մինչ Նարայիլ վրայ հասաւ խրատներու փաթեթով մը: Ան միաժամանակ զօրակցութիւն յայտնեց Աունին եւ կոչ ուղղեց երկխոսութեան եւ ըսաւ, որ բոլոր ընտրանքները կը մնան բաց:

Յիշելու է, որ իրենց կը կանգնին Երեսօրէնի Միշէլ Աունի դիրքորոշումներուն կողքին: Նարայիլի համաձայն Աունի պահանջները արդարացի են: Ան կոչ ուղղեց երկխոսութեան կատարելու Ազգային Ազատ Հոսանքին եւ Մուսաբալայի հոսանքին հետ լուծումներու հանգելու համար: Նարայիլ շեշտեց, որ կառավարութեան մէջ պէտք է մշակուի որոշումներ առնելու արդար մեթոտ մը:



Միշէլ Աունին: Ան սակայն Նշեց, որ իրենց գուցէ որոշ մանրամասնութիւններու պարագային յատուկ դիրքորոշումներ եւ կեցուածքներ պիտի որդեգրեն: Ֆրէնժիէ մերժեց ապակերտուեցման ծրագիրը եւ զօրակցութիւն յայտնեց միացեալ Լիբանանին:

### Միշէլ Աունի Այցելեց Վարչապետարան

Կառավարութեան նիստի ընթացքին տեղի ունեցած դեպքերու լոյսին տակ, նախկին նախագահ Միշէլ Աունի մտքը այցելեց վարչապետարան եւ տեսակցեցաւ Վարչապետ Թամմամ Սալամի հետ՝ կարգ մը նախարարներու ընկերակցութեամբ: Այցելումը տեղի ունեցաւ Սալամի դիրքորոշումները, ինչպէս նաեւ կոչ ուղղեց նոր նախագահ մը ընտրելու: Ան զարմանք յայտնեց, թէ ոմանք ինչպէս կը զօրակցին բանակին, սակայն միաժամանակ կը քննադատեն ընդհանուր հրամանատարը: Նոյն ուղղութեամբ 14 Մարտի ուժերը ներկայացնող պատուիրակութիւն մը իր կարգին երէկ յետմիջօրէին այցելեց Վարչապետարան զօրակցութիւն յայտնելու Վարչապետին:

Միշէլ Աունին: Ան սակայն Նշեց, որ իրենց գուցէ որոշ մանրամասնութիւններու պարագային յատուկ դիրքորոշումներ եւ կեցուածքներ պիտի որդեգրեն: Ֆրէնժիէ մերժեց ապակերտուեցման ծրագիրը եւ զօրակցութիւն յայտնեց միացեալ Լիբանանին:

### ՄԱԿի Ընդհանուր Զարտուղարը Կոչ Կ'ուղղէ Նոր Նախագահ Ընտրելու

Պէրյուֆի մօտ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչը Լիբանանի քաղաքական կողմերուն կոչ ուղղեց նոր նախագահ մը արագօրէն ընտրելու: Անոր խօսքով պէտք է վերակենդանացնել հաստատութիւններու աշխատանքը եւ պահպանել Լիբանանի կայունութիւնը:

### Ձերբակալութիւններ

Ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը Նշեց, որ տեղեկահաւաքի բաժանմունքը կրցած է Տորայի շրջանին մէջ ձերբակալել 1978ին ծնած լիբանանցի մը, որ կը հետապնդուի Երեւանի Բիքարտո ժառանգարան արեւանգելու յանցանքով: Միաժամանակ խուզարկումներ տեղի ունեցած են Ուստի հալըտ շրջանին մէջ, ուր բացայայտուած են գրաւուած է երեւանցիի ազատ արձակումին համար վճառուած փրկագինը: Լիբանանեան բանակը Նշեց, որ Թրիփուլիի մէջ կատարած խուզարկումներուն ընթացքին ձերբակալուած են երկու անձեր, որոնք կը հետապնդուին ահաբեկչական կազմակերպութիւններու անդամակցելու յանցանքով:

### Թամմամ Սալամ - Ուալիտ Ժոմպլաթ Բեռնախօսագրոյց

Վարչապետ Թամմամ Սալամ հեռախօսագրոյց մը ունեցաւ ժողովրդական հանդիպում պլոքի նախագահ Երեսօրէնի Ուալիտ Ժոմպլաթի հետ, որուն տեղի ունեցաւ Թամպլաթի դիրքորոշումները: Վերջինս հաստատեց, որ իր նախարարները կը զօրակցին Սալամին եւ կառավարական կայունութեան: Ժոմպլաթ նաեւ հեռախօսագրոյց մը ունեցաւ Երեսօրէնի Սըլայման Ֆրէնժիէի հետ:

### Ֆրէնժիէ Կը Զօրակցի Աունի

Ֆրէնժիէ իր կարգին մամլոյ ասուլիս մը տուաւ, որուն ընթացքին ամբողջական զօրակցութիւն յայտնեց Երեսօրէնի:

**Շրջանային Լուրեր**

### Հասարթի Մէջ Բախումներ

Չինեալ ծանր բախումներ տեղի ունեցան Սուրիոյ Հասարթ շրջանին մէջ: Իսլամական պետութիւն կազմակերպութիւնը երեք ակնհայտ ինքնաշարժներ պայթեցուց քաղաքի արեւելեան Կիլիաներ թաղամասին մէջ, իսկ Չապատանիի մէջ բախումները շարունակուեցան մէկ կողմէ Հոլանտական եւ Սուրիոյ բանակի եւ միւս կողմէ ընդդիմութեան միջեւ:

### Իրաք Կը Պատրաստուի Ազատագրել Տաւշի Լուծին Տակ Գտնուող Տարածքներ

Իրաքի պաշտպանութեան նախարար Խալիտ Ուալիտի Նշեց, որ զինուած ուժեր կը պատրաստուին Տաւշի լուծին ազատագրել զանազան տարածքներ, իսկ Իրաքի կրօնական հեղինակութիւններէն Ալի Սիստանի Իրաքի հարեւաններուն կոչ ուղղեց յաւելեալ ջանք թափել, կոտորելու համար Տաւշին դէմ:

### Պոլսոյ Մէջ Ձերբակալութիւններ

Պոլսոյ ոստիկանութիւնը գործողութիւններու ձեռնարկեց եւ ձերբակալեց 30 անձեր: Անոնք կը հետապնդուին Իսլամական պետութիւն կազմակերպութեան ի նպաստ գինուորագրութիւններ կատարելու յանցանքով:

### Ամմատ Տաւուտօղլու Համախոհական Կառավարութիւն Պիտի Կազմել

Թուրքիոյ գործող Վարչապետ Ամմատ Տաւուտօղլու, որ վերանշանակուած էր Նոյն պաշտօնին համար, յայտարարեց, որ երկուշաբթի օրէն սկսեալ խորհրդակցութիւններ պիտի կատարէ խորհրդարանական մնացեալ երեք խմբակցութիւններուն հետ, փորձելու համար համախոհական կառավարութիւն մը կազմել: Կ'ակնկալուի, որ Տաւուտօղլու 45 օրերու ժամկետ մը ունենայ կազմելու նոր կառավարութիւնը, այլապէս կը կազմակերպուին կանխահաս ընտրութիւններ:

### Իրանի Հիւլեական Հարցով Բանակցութիւնները Պիտի Շարունակուին

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին շեշտեց, որ իրենք ջանք կը թափեն որ Իրանի Հիւլեական հարցով համաձայնութիւններու հանգին: Նախագահ, Իրանի արտաքին գործոց նախարար Մուհամմատ Ժաւադ Զարիֆ յայտարարած էր, որ բանակցութիւններուն մէջ տակաւին վերջնական համաձայնութիւն չկայ, սակայն յառաջընթաց արձանագրուած է: Մեծն Արիտանիոյ արտաքին գործոց նախարար Ֆիլիպ Դաւնը Նշեց, որ իրենք քննարկումները պիտի շարունակեն նաեւ շաբաթավերջին:

**Լուրեր Արաբական Աշխարհէն**

### Եմէնի Մէջ Զօրակցական Ցոյց

Եմէնի մէջ, Հունիսներու Անսար Ալլա կազմակերպութիւնը կազմակերպեց Երուսաղէմի զօրակցական ցոյց մը: Կազմակերպութեան ղեկավար Ապտուլ Մեխի Հունիս



իր ուղերձին մէջ կասկած յայտնեց Եմէնի մէջ յայտարարուած զինադադարի հաւանական գործադրութեան կապակցութեամբ: Անոր համաձայն Իրանի դէմ թշնամութիւն կայ, որովհետեւ Իրան դէմ կը կանգնի Իսրայելեան ծրագիրներուն: Նախագահ Մուստաֆա Արաբիոյ պատասխանատու մը հաստատած էր, որ Եմէնի մէջ զինադադարի գործադրութիւնը բաւական դժուար է:

### Հռոմի Ֆրանչիսքոս Պապը Զօրակցական Կոչ Կ'ուղղէ Միջին Արեւելքի Զրիստոնէաներուն

Հռոմի Ֆրանչիսքոս Պապը կոչ ուղղեց վերջ տալու Միջին Արեւելքի քրիստոնէաները ցեղասպանութեան



ենթարկելու ծրագիրին: Կատարած յայտարարութեան մէջ Պապը Նշեց, որ իրենք ցաւով եւ սարսափով կը հետեւին Միջին Արեւելքի քրիստոնէաներուն դէմ գործադրուած բռնութիւններուն, զանոնք համարելով համաշխարհային երրորդ պատերազմի քայլեր:

**Հայրենի Լուրեր**

## Յեղասպանագետներու Միջազգային Ընկերակցութեան 12-րդ Գիտաժողովի Մասնակիցները Ծիծեռնակաբերդի Մէջ


Շուրջ 130 մասնակիցներ աշխարհի 35 երկիրներէ ծաղիկներ տեղադրեցին ցեղասպանութեան զոհերու յիշատակը յաւերճանող անմար կրակին մօտ եւ մէկ վայրկեան լռութեամբ յարգեցին անմեղ զոհերու յիշատակը: Այս մասին կը տեղեկացնէ Հայոց Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի կայքը:



Երեսնեան համաժողովի մասնակիցները այցելեցին Հայոց Յեղասպանութեան թանգարան, ծանօթացան նոր ցուցադրութեան հետ. շատեր էին կրնար թաքցնել իրենց յուզումը: Թանգարանին մէջ կատարած շրջայցէն յետոյ պատուիրակութեան անդամները այցելեցին Յիշողութեան պուրակ, ուր եղնի մը տնկեցին:

## Արցախի Այցելող Չբօսաշրջիկներու Թիւը Աճած Է


Ընթացիկ տարուան Յունուար-Յունիս ամիսներուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն այցելած է 5286 զբօսաշրջիկ, նախորդ տարուան նոյն ժամանակահատուածի 4353-ի փոխարէն:



Այս մասին «Արցախփրէս»-ի թղթակիցին հետ զրոյցին ըսած է ԼՂՀ արտաքին գործոց նախարարութեան մամլոյ քարտուղար Անի Սարգսեան: «Այս տարի Արցախի նկատմամբ արտասահմանցի լրագրողներու հետաքրքրութիւնը աննախադէպ է. առաջին վեց ամիսներու տուեալներով ԼՂՀ ԱԳՆ տեղեկատուութեան ու հասարակայնութեան հետ կապերու վարչութեան մէջ լրագրողական հաւատարմագիր ստացած է 100 արտասահմանցի լրագրող, մինչդէռ նախորդ տարի նոյն ժամանակահատուածին՝ 23», Նշած է Ա. Սարգսեան:

## Փութին. Հայաստանը, Ատրպէյճանը, Զամպոյջան եւ Նեփալը Կը Միանան ԸՀԿ-ին Իբրեւ Գործընկերներ

Հայաստանը, Ազրպէյճանը, Զամպոյջան եւ Նեփալը կը միանան Ընտանիքին՝ ԸՀԿ ընտանիքին՝ որպէս կազմակերպութեան գործընկերներ: Այս մասին յայտարարած է ՌԴ նախագահ Վլատիմիր Փութինը՝ բաժնակցութեան ղեկավարներու խորհուրդի ընդլայնուած նիստը, կը հաղորդէ News.am-ը:



Փութինի խօսքով, կան նաեւ այլ երկիրներ, որոնք կը ցանկան մասնակցիլ ԸՀԿ-ի աշխատանքներուն: «Ես շարք մը երկիրներ հետաքրքրութիւն կը ցուցաբերեն մեր կազմակերպութեան այս կամ այն ձեւով միանալու հարցով: Մենք ուշադիր, պիտի քննարկենք այդ հայեցողը՝ հաշուի առնելով համապատասխան պահանջները», ըսած է ՌԴ նախագահը:



ՌԱԿ-ի Լուրեր

# Շնորհանդես Ընկեր Յակոբ Վարդիվառեանի Լորագոյն Երկին

Երեկ երեկոյան ժամը 7:30-ին, Թեքեան Կեդրոն փութացած էին ՌԱԿ-ի հաւատարմորներ ու բարեկամներ՝ ներկայ գտնուելու ընկեր Յակոբ Վարդիվառեանի «Մեծ Երագի Ծամբուն Ուղեւորները եւ Գամապարփակ Պատմութիւն Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ա. Գատոր»-ի շնորհանդեսին:



Ձախեն՝ Պրն. Շահան Գաւտահարեան, Ընկ. Միքայէլ Վայեճեան, Ընկ. Յակոբ Վարդիվառեան, Ընկ. Յակոբ Գասարճեան եւ Ընկ. Դոկտ. Սուրեն Սարգսեան

Ձեռնարկը իրենց ներկայութեամբ կը պատուէին անոր հովանաւոր ԹՄՄ Գիմնադիրներու Մարմնի ատենապետ՝ ՌԱԿ-ի պետական նախկին երեսփոխան ընկեր Յակոբ Գասարճեանը, ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ՝ ընկ.

Միքայէլ Վայեճեանը, 33 Լիբանանի մօտ Զիւլպատոս Պրն. Աշոտ Վարդանեանը, Գերարգելի Զայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեանը եւ շատ մը յարգելի հիւրեր:

Բացման խօսքով հանդես եկաւ ընկ.հի Պայծիկ Գալայճեան: Արմենական Կուսակցութեան հիմնադրութիւնն ու գործունեութիւնը անոր հիմնադիր Մկրտիչ Աւետիսեանի կեանքին պատմութեան միջոցաւ ներկայացուած տեսերիզին ցուցադրութենէն ետք, տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որմէ ետք բեմը յանձնուեցաւ Զայրենի Պատմաբան՝ ՌԱԿ ԶՎ ատենադպիր ընկ. Դոկտ. Սուրեն Սարգսեանին, որ մասնագիտական բժանխորհրդեամբ ներկայացուց նշեալ հատորը:

Ապա, ներկայացուցեցան շնորհատրագիրներու շարք մը ուղղուն ընկեր Վարդիվառեանին: Ընկ Սեւակ Յակոբեան ընթերցեց ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան ողջոյնի գիրը, ապա զայն պաշտօնապէս յանձնելով հեղինակին:

Կարգը հեղինակինն էր: Ընկեր Յակոբ Վարդիվառեան իրեն յատուկ ոճով ներկայներուն խօսեցաւ գիրքը պատրաստելու իր զգացական ու նուիրական դրոշմատմաններուն մասին:

Հուսկ բեմ հրաւիրուեցաւ ընկեր Յակոբ Գասարճեան, իր սրտի խօսքը փոխանցելու ներկայներուն:

Գերարգելի Զայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան իր հոգեւոր ու հայրենասիրական խօսքով օրինեց ձեռնարկը:

Աւարտին, տեղի ունեցաւ անդադական զինձեօնը, որմէ ետք ներկայները հրաւիրուեցան կոկիկ հիւրասիրութեան: Մանրամասնութիւնները յաջորդիւ:

## Սակայն Երբ Մարդկային Հոգին Տուժէ, Ի՞նչ...

Այսօր, աչքէ կ'անցնեն նախորդ տարիներուն կատարած գրառումներս, երբ այս մէկը կարդացի, այն համոզուիմ եկայ, որ հակառակ օրերը, շաբաթները, ամիսներն ու տարիները կը սահին, սակայն մենք կը շարունակենք նոյն անկազմակերպութեամբ յառաջանալ, օր օրի աւելցնելով մեր մարդկային, ֆիզիքական եւ նիւթական վնասները: Եզրակացութիւններն ու ընկանդատութիւնները կը թողում ձեզի:

**ՀԱՐՑԱԴՐՈՒՄ.**  
4 Տարիէ ի վեր Սուրիան պատերազմական վիճակի մէջ է: Առաջին օրերուն, յստակ չէր ինչ կը կատարուէր, ի՞նչ նկատուէր կը հետապնդէր, եւ ինչերո՞ւ շարան մը կրնանք երկարացնել: Սակայն մի քանի ամիս ետք, արդէն կամաց-կամաց սկսեալ յայտնի դառնալ կատարուածը, եւ թէ ինչի կրնար հասնել հորիզոնի վրայ ՅՍՏԱԿ կերպով գծագրուած էր:

Գալով մեզի՝ հայերու: Սուրիոյ մէջ ապրող հայերուն զգալի մէկ տոկոսը լաւապէս գիտակցեցաւ կատարուածին եւ հետեւանքներուն: Շատեր ձգեցին ու հեռացան, շատեր որոշ ժամանակ սպասեցին՝ իրենք զիրենք համոզուելով թէ վերջ պիտի գտնէ այդ իրավիճակը, սակայն տեսնելով որ անիւր հակառակ կողմ կը դառնայ, ձգեցին եւ հեռացան: Իսկ մնացած զանգուածը տարբեր-տարբեր պատճառներով շարունակեց մնալ Սուրիոյ մէջ:

Դուրս գացողներուն մեծամասնութեան վերադարձը Սուրիա յետ այսու՝ կասկածելի է: Որովհետեւ արդէն իսկ իրենց հաստատուած երկիրներուն մէջ նոր սկիզբ դրած են, եւ կ'աշխատին գոյատեւել: Հակառակ յաճախակի մեր լսած արտայայտութիւններուն թէ միայն լաւանայ վիճակը կը վերադառնամ, բայց կը կարծես այդ մէկը ըսողները՝ իրենք իսկ չեն հաւատար իրենց ըսածին:

Իսկ մնացողներու պարագային, ինչ կերպով ալ փորձենք մտածել, վերլուծել, արտայայտուիլ, մեր յայտնած մտքերը, գաղափարները, վերլուծութիւններն ու ենթադրութիւնները կը մնան լոկ մտահոգութիւններ, որովհետեւ դուրսը նստած շատ դիւրին է խօսիլ, կարծիք տալ, եւայլն, եւայլն: Այս հոսանքին մէջ կը մտնեն չեզոքութեան կոչերը, ամեն գնով շարունակել Սուրիա մնալը, եւայլն:

Այս բոլորն էտք սակայն, կը ծագի հետեւեալ հարցադրումը. Ի՞նչ տուին մեզի այս երեւոյթները. ձգել հեռանալ, փորձել չեզոք մնալ, ամեն գնով մնալ Սուրիա, եւայլն: Ի՞նչ տուին մեզի այս բոլորը:

Փորձելով պատասխանել հետեւեալ եզրակացութեան կ'ուսենք.

- ա) Ձգել հեռանալ: Գոյատեւելու արդար իրաւունք է, մասնաւոր իրավիճակին եւ պայմաններուն առողջ գիտակցումը կայ:
- բ) Չեզոք մնալ: Ինչպէ՞ս կարելի է խօսիլ չեզոքութեան մասին, երբ միւս կողմը կը յայտարարենք թէ մենք Սուրիական Զայրենիքին լիիրաւ քաղաքացիներն ենք: Եթէ լիիրաւ քաղաքացի ենք, հետեւեալ չեզոքութիւնը դասալուծութեան համագործակցութեան է: Եթէ չեզոքութիւն կը փորձենք պահել այնպիսի իրավիճակի մը մէջ, որու խաղաքարտերը արդէն խնդիր սկսելուն յաջորդող մի քանի ամիսներուն բացայայտուեցան, քաղաքական գետնի մէջ խաղաքարտերն են ըստ իս՝ Եզրակալի, Դընձմիայի եւ Քեսապի ձեռքէ տալը:
- գ) Ամեն գնով Սուրիա մնալ: Եւ ի՞նչ տուաւ մեզի այս երեւոյթը: Տասնեակէ աւելի զոհեր, տասնեակէ աւելի վիրաւորներ: Երիտասարդ տղաք՝ որոնք տակաւին իրենց կեանքի գարնան օրերը նոր սկսած էին ապրիլ, այսօր արդէն առ յաւետ բաժնուած են մեզմէ: Երիտասարդ ծնողներ, որոնք ընտանիք կազմած էին, այսօր անվերադարձ հեռացած են իրենց ընտանիքներէն: Ա՞յս է նպատակը ամեն գնով Սուրիա մնալու:

Այս բոլորը նկատի ունենալով, տակաւին ինչի՞ կը սպասենք: Ի՞նչ պէտք է կատարուի տակաւին, որպէսզի սթափինք եւ վրէժը քայլերու դիմենք, պահելու համար այն ինչ որ կարելի է պահել ու փրկել: Սակայն այդ քայլին դիմելու համար, պէտք է հասկնալ, որ մարդու հոգին ամեն ինչէ առաջ ու վեր է: Տուր կը քանդուի, սեփականութիւնը կը գողցուի, եւ հազար ու մէկ այլ բաներ, որոնք սակայն ժամանակի ընթացքին կրկին կը ձեռքբերուին, սակայն երբ մարդկային հոգին տուժէ, ի՞նչ...:

## Հայկական Բարձր

# Պուստ մը Քաղաքավարութիւն

Հեռաձայնը՝ տնային կամ բնակարան, կը հնչէ եւ հագի կը պատասխանես, հարցումներ տեղատարափ մը կը տեղափոխուի: Չես գիտեր ինչպէս պատասխանել, որովհետեւ դժբախտաբար տեղեակ չես, թէ խօսակիցդ ով է:

Բարեկամ, տրամաբանութիւնը կը պահանջէ, որ նախ ինքնուրուի մտքով յայտնաբերես ու ապա սկսիս խօսակցութեան, ըլլալ այդ անհատուած հարցումներ թէ ուրախափոք եւ կամ ցաւալի լուր մը: Ինչո՞ւ թողուլ, որ խօսակիցդ անտեղի կերպով չարշուկէ իր միտքը, գիտնալու համար թէ ով էս դուռ...:

Շատ վատնեմ եմ, որ ձեզի ալ պատահած է հետեւեալ անխորժ դէպքը: Դարձեալ հեռաձայնը կը հնչէ եւ երբ պատասխանես, հանելուկի մը դէմ յանդիման կը գտնես դուռ թե՛ «Գիտցիր, ով եմ ես»: Հասանաբար մէկն է, որ տարիներով ո՛չ տեսած ես, եւ ոչ ալ առիթը ունեցած՝ հետը խօսելու... Է՛հ հիմա ժամանակն է միտքդ նորէն չարշարելու, գիտնալու համար թէ ով է խօսակիցդ:

Այսքանը տակաւին հերիք չէ՛ եւ թէ պատահի որ չգիտնաս թէ խօսակիցդ ով է, ամօթի զգացում մը կը տեղացնէ վրադ, որ չճանչցար զինք: Բարեկամ, անամօթը դուռն էս, որ չես յայտնաբերեր ինքնուրուի մտքը:

Կ'ուզեմ բան մըն ալ աւելցնել եւ ասարտել այս մտքը: Հեռաձայնային կապ հաստատելու համար՝ պէտք է խուսափիլ վաղ առատեան, ուշ գիշերին եւ կամ ճաշի ժամանակներէն, որպէսզի խօսակիցդ ներ դրութեան չմտնես:

### Պուստ մը Խոնհոնութիւն

Ես կը ջանամ ամէն Կիրակի եկեղեցի երթալ եւ ներկայ գտնուիլ Պատարագին: Նստած կը հետեւիս հոգեպարար արարողութեան եւ յանկարծ կը հնչէ մէկու մը բնակարանի հեռաձայնը: Խոնհոնութիւնը կը թելադրէ, որ եկեղեցի չմտած կ'ամ մարես հեռաձայնը, եւ կամ ալ զայն գետնէն թրթռումի կերպին (մոտի) վրայ, որ չ'անհանգստացնես ու մէկը եւ չ'անհանգստեցնես ժամերգութիւնը:

Հեռաձայնային խօսակցութիւնը հիմա փոխարինուած է հեռաձայնային նամակագրութեամբ: Ուրեմն եկեղեցիին մէջ՝ արարողութեան հետեւեալ փոխարէն, մարդիկ կ'որոնք կը զբաղին այս նոր հնարուած նամակագրութեամբ: Եկեղեցի յաճախելու ըմբռնումը բոլորովին յեղաշրջուած է պժմ է դժբախտաբար եթէ հոգեհանգիստ չըլլայ, եկեղեցիները գրեթէ ամբողջովին դատարկութեան կը մատուցին:

Յաճախ ուրիշ անախորժ դէպքի մըն ալ դէմ յանդիման կու գաս, որն է տարիքտու կնկալ մը երգեցողութեան բարձրաձայն հետեւելը: Ան դժբախտաբար ո՛չ նօթալէ կը հասկնայ, եւ ոչ ալ բառերը շիտակ կ'երգէ... Դժբախտաբար սակայն, չես կրնար արգիլել զինք:

Երեւոյթ մըն ալ՝ որ տգեղ է եւ անտեղի, այն է որ երբեմն խորհրդով վրայ պատարագիչն ու սարկաւազը կողմնակի խօսակցութիւն կ'ունենան: Ո՞ր է Պատարագի լրջութիւնն ու պահուած աղօթք սրբութիւնը: Անոնք կրնան իրենց խօսակցութիւնը՝ եթէ անհրաժեշտ է, կատարել գոց խորհրդի ետեւ՝ օրինակ «Տէր Ողորմեայ»-ի ժամանակ, երբ ժողովուրդը չ'անդրադառնար բնաւ: Բարեկամ հարկն ու կանոնը չես կրնար անգիտանալ:

### Պուստ մը Զգաստութիւն

Հայկական գաղութի մը համար, ուր որ ալ ըլլայ այդ, սովորական է, որ զանազան ձեռնարկներ կազմակերպուին նուիրաբար համար, այլապէս՝ ո՛վ պիտի հոգայ գաղութի զանազան կարիքները:

Այս ծիրին մէջ կ'իլնայ նաեւ Համահայկական Հիմնադրամի տարեկան Թելեթօնը, որ տեղի կ'ունենայ Լոս Անճելէսի մէջ՝ Նոյեմբեր ամսուան ընթացքին, Ամերիկեան Գոհաբանութեան Տօնի զուգահեյտով Հիմնադրամի օրը:

Խօսքս անոնց է, որոնք նուիրատուութեան համար խոստում կու տան, սակայն չեն յարգել իրենց խոստումները: Ինձի համար հանելուկ է արդե՞ք այս ամբողջը, կամ պարզապէս կը մոռնան իրենց տուած խոստումը, թէ լոկ կ'ուզեն որ իրենց անունը տրուի որպէս բարերար եւ վերջ:

Պատահած է, որ նոյնիսկ նուիրատուութեան «Չէք» տուած են եւ ապա յաջորդ օրը հեռաձայնած են ըսելով որ «Չէք» են տուր, քանի դրամատու մէջ բաւարար գումար չկայ: Որքան միամիտ պէտք ըլլալ մէկը, որ հաստատ պէս տուի վարկածի...:

Բարեկամ, նուիրատուութիւնը ստիպողական չէ: Եթէ չես ուզեր մասնակցիլ, անտեղի խոստում մի կատարեր եւ հանգիստ ձգէ մեզ: Հասկնողի՞մ շատ բարեկներ:

## Անակնկալ Հանդիպում Կարապետ Պապահեքեանի Հետ

Գործարար այս հայորդիին գործատեղիին դիմացէն արտորոսը կը քալէ: Ենթակային անուրջ շատ բան յիշել տուաւ ինձի: Շա՛տ երեւոյթներ կ'ապուած Կարապետ Պապահեքեանի անունին: Խնձորի մասին պիտի խօսիմ եւ կ'զգեմ:

Այս անուանումները գուցէ խնդրը պատճառն են ձեզի: Բայց վերի խօսքս լուրջ է:

Գործարար մարդը, երբ կը խորհի օգտակար ըլլալ իր հայրենիքին, առաջին առիթով իր միտքը, մտածումները ուժգին ուղղութիւն մը կ'անեն, ոչ թէ ծանր խօսելով մասին, այլ՝ ճար մը ընելու մասին, որ զօրանայ, իր հայրենիքին տնտեսութիւնը: Որովհետեւ երկիրը երբ տնտեսական հզօրութիւն ունենայ, ժողովուրդը տեղաշարժի չենթարկուիր: Հոն, անգործութիւնը կ'ըլլայ մեծ բացական:

Եւ ահա մի քանի տասնամեակ առաջ Պապահեքեան Կարապետը հետեւելով Սահակ Խապայեան հայրապետի այն կարգախօսին, թէ խորհրդային Զայաստանը աւելի լաւ է քան անխորհրդորդ Զայաստան մը, որպէս գործարար Զայորդի կը մտածէ խնձորենիներով հարստացնել Զայաստանը եւ որպէս գործակալ մարդ, Լիբանանէ մի քանի հազար խնձորենիի տնկիկներ իր հետ արտօնագիրով մը ապահոված կը հասնի Երևան:

Պետական մարդիկ այս նորութիւնը կ'ընդունին սիրով եւ այդ տնկիկներուն կը յատկացնեն որոշ շրջան:

Փորձը կ'անցնի ձախող: Տնկիկները կը չորանան:

Պապահեքեանը, յուսահատող անձ մը չէ: Երկրորդ փորձի մը կը ձեռնարկէ տնկիկներ գատելով անուանումով կոլտոն եւ սատրոն: Այս անգամ բանաստեղծին բառովը.՝ Զայաստան աշխարհին վրայ պտղաբերութիւն թող ըլլայ, օրինեցողութիւն թող ըլլայ:

Տնկիկները կու տան արդիւնք: Ու երկրին պետական այրերը նախաձեռնողին կը մատուցեն կողով մը խնձոր:

Այդ կողովը տասնամեակներէ ի վեր ի պահ դրուած Պրն. Պապահեքեանի աշխատավայրին մէջ իր յարատեւող ուրախութիւնն է:

Պետութիւնը այս անգամ նոյն տեսակի տնկիկներով հարուստ երկիրը գտնելով, տանսեակ հազարաւոր տնկիկներ կը բերեն Թիթոյի Եուվոյախայէն ու Զայաստանը կը դառնայ խնձորի երկիր: Ու Ե՛կ Պապահեքեան մի՛ ուրախանար:

Գործարար մարդ, այս անգամ Պապահեքեանին միտքը կը յօրի կ'ովերու կաթնատուութեան եւ ինչ որ կ'ապ ուներ կաթնատուութեան հետ: Այսինքն նկատի ունենալ ցեղային յատկանիշերը կ'ովերուն: Զայաստանի ունեցած կ'ովերը՝ Էգերը անշուշտ, ո՞ր աստիճանի կաթնատու են, օրակառ քանի՞ լիթր կաթ՝ կ'արտադրեն:

Այս ուսումնասիրութիւնը Պապահեքեանի մտածումները կ'առաջնորդեն Հոլանտա ու Գերմանիա, ուր երբեմն այդ երկիրներու կանաչապատ դաշտերուն վրայ թանկանոց կ'ովեր կարածեն մրցանշային կաթնատուութեամբ:

Պապահեքեանը ինչու նման կ'ովերէն երկվեցեակ մը ձեռք բերելով չտաներ Զայաստան:

Միտքը գործի կը վերածուի եւ Զայաստանը կ'ունենայ այդ կաթնատուները ցեղային ընտրութեամբ:

Ահա թէ ինչ կը նշանակէ սիրտի, այլ ոչ շրթնային հայրենասիրութիւնը:

Հարուստ է միտքը Պապահեքեանի: Երկիրը, ուր կ'ապրի այս հայորդին Լիբանանն է: Ան կրնա՞յ չճանայել նաեւ իր ապրած երկրին:

Ու ահա Պապահեքեան Կարապետը ափ կ'անեն Պուրճ Յաճիլի քաղաքապետին մօտ առաջարկով մը:

Այդ օրերուն աւելի քան տասնամեակով մը Պուրճ Յաճիլի քաղաքապետն էր Տոքթ. Սկրեանը:

Ի՞նչ է հարցը:

Հայոց շուկային վրայ, որպէսզի տնտեսութիւնը զարգանայ խանութներու, մթերանոցներու կից պէտք է կառուցուին կառք գետեղելիք վայրեր: Այդ դրութիւնը կ'օգնէ ժողովուրդին հասնելու սիրտով անցնելու գնումներու:

Ահա ծրագիր մը՝ օգտաշատ ծրագիր մը:

Յանկարծ չկարծեք թէ Պրն. Պապահեքեան կեանքի հարցերուն կը մօտենայ միայն ու միայն շահի տեսանկիւնէն:

Մշակոյթը, մշակոյթը կարելի կը նկատէ ու կը ձեռնարկէ հրատարակութեան մեծիկ ու գունաւորապէս հատորի մը, որ կ'ըլլայ ցուցադրավայրը հայ հարուստ մշակոյթին:

Կուսակցական է Պապահեքեան: ՌԱԿի անդամ: Կը վարէ կուսակցական պատահանատու պաշտօններ միշտ՝ գործնականութիւնը իրեն ուղեցոյց:

Ահա այս բոլորը մեր խօսակցութեան նիւթերը դարձան, երբ այս տարուան Յունիսի 7-ին մտայ այս հայորդիին աշխատավայրը:

Խօսակցութեան մէջ խնձորի բուրմունք կար եւ կաթի բուրմունք, երբ արտայայտուեցանք նաեւ երկրի եւ այսօրուան Զայաստանի մասին, այո՛ւ, նաեւ հայուն թերութիւններուն մասին:

Գործարար հայուն հետ մեր գրոյցը հանդիսացաւ մշակոյթի բոլոր երանգներով:

Պահ մը մոռցանք օրուան ծանր մտածումները, մարդոց մօտ բրգացող ստախօսութիւնը, մշակոյթի պահ մը ապրեցանք:

Իրաւ ապրում մըն էր մերինը:

Երբ մեկնելու պահուն՝ իմ մէկ նոր գիրքը կը մակագրէի Պապահեքեան ամուլին համար, խօսակցից ըսաւ: Աքբեր տկարացած են, կինս մէկ օրուան մէջ կը կարողայ այս գիրքը, ինձի համար ես կը կարողայ: Տարիք առնելը դժուարին պահեր կու տայ մեզի:

Այո՛, ճիշդ նկատեցիք, աւելցուց, տարիք առնելը ոչ ծերանալը: Հայեր տարիք կ'անեն: Չի ծերանար, երբ արթուն կը պահէ իր ուղեղը վասն մարդոց ու իր ժողովուրդի բարօրութեան:

Գեղեցիկ էր ապրուած պահը, քանի վերոյիշումներ էին գեղեցիկ:

Չմոռնանք կատարուած գործերը, այդ գործերը կատարողները որքան ալ վաղեմութիւն ունենան այդ եղելութիւնները, որոնք միայն բարիք բերած կ'ըլլան:

Մարդիկ հարուստ կ'ըլլան միայն իրենց տուածով:



# ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ - 100 ԱՄԵԱԿ

## Սկսած է «Աւրորա» Մրցանակի Յաւակնորդներու Առաջադրումը

Սկսած է Ռուբեն Վարդանեանի, Նուպար Աֆեյեանի եւ Վարդան Գրեգորեանի կողմէ հիմնադրուած «Աւրորա» միջազգային մարդասիրական մրցանակի յաւակնորդներու առաջադրումը, կը գրէ «Mediamax»-ը:



«Աւրորա» մրցանակը (Aurora Prize for Awakening Humanity) «100 կեանք» նախաձեռնութեան բաղադրիչներէն մէկն է: Նախաձեռնութեան պաշտօնական մեկնարկը տրուած է այս տարուան Մարտին Նիւ Եորքի մէջ:

Յաւակնորդներու առաջադրման մեկնարկի առնչութեամբ Ռուբեն Վարդանեան եւ Enough Project-ի հիմնադիր տնօրէն Ջոն Փրենտերգեսթը ամերիկեան The Huffington Post-ի մէջ հրատարակած են «Մարտահրաւէր հանրութեան. գտնել մարդկութիւնը անմարդկայինի մէջ» (A Public Challenge: Find Humanity in the Inhumane) համատեղ յօդուածը:

«Անկարագրելի վտանգի պայմաններու մէջ խիզախութիւն ցուցաբերած մարդոց երախտագիտութիւնը յայտնելու նպատակով այս տարուան Մարտին մենք նախաձեռնեցինք «Աւրորա» միջազգային մարդասիրական մրցանակը: Այս մրցանակը ամէն տարի պիտի տրուի այն անհատներուն կամ խումբերուն, որոնք անցած են անկարագրելի փորձութիւններու մէջէն՝ այլոց կեանքը փրկելու համար», - նշած են յօդուածին հեղինակները:

Մրցանակի յաղթողը պիտի ստանայ 100 հազար տոլար, եւ 1 միլիոն տոլար ան պիտի փոխանցէ այն բարեգործական կազմակերպութեան, որ ոգեշնչած է զինքը:

«Ասիկա լիովին կը համապատասխանէ «Աւրորա» մրցանակի ստեղծման գաղափարին եւ կը նպաստէ մարդոց օգնութեան ձեռք մեկնելու շրջափուլի մեկնարկին: Այս մրցանակը միտուած է հաւասարապէս ե՛լ անցեալին, ե՛լ ապագային՝ երախտը յայտնելով անցեալի մէջ ինքնագոհաբերութեան օրինակներու հեղինակներուն եւ միաժամանակ աջակցելով մարդասիրական քայլերուն: Այս մրցանակը ճանապարհ կը հարթէ՝ օգնելու եւ ֆինանսապէս աջակցելու ապագային խիզախութեան եւ կարեկցանքի դրսեւորումներուն», - ըստուած է յօդուածին մէջ:

«Աւրորա» մրցանակը առաջին անգամ պիտի շնորհուի Երեւանի մէջ՝ 2016 թուականի Ապրիլին: Մրցանակը պիտի յանձնէ ամերիկացի յայտնի դերասան Ճորճ Զլուկին, որ ժիրիի համանախագահն է:

## Հայոց Տեղասպանութեան Ճանաչման Բանաձեւը Զննելով Պիտի Զննարկէ Հայաստանի Անկախութեան Օրը

Իսրայէլի Զննելի պատգամաւորները կը խոստանան արձակուրդէն ետք Հայոց Տեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի նախագիծը մտցնել օրակարգը:

Այսօր առաւօտեան Զննելի կրթութեան, գիտութեան եւ մարմնակրթութեան յանձնաժողովին մէջ ի վերջոյ տեղի ունեցաւ նախագիծը քննարկումը:

Հայոց Տեղասպանութեան ճանաչման բանաձեւը կրկին իրեայ պատգամաւորներու ուշադրութեան կեդրոնին յայտնուած էր դեռ Մայիս 12-ին, երբ «Մերես» կուսակցութեան ղեկավար Չահաւ Գալ-օնն զայն օրակարգի վրայ քննարկելու առաջարկութեամբ հանդէս եկաւ: Հարցը այն ատեն փոխանցուեցաւ կրթութեան, գիտութեան եւ մարմնակրթութեան յանձնաժողովին, որ ալ այսօր լիագումար բաց քննարկում կազմակերպած էր:



Նիստին աւարտուէն ետք, Հայ դատի տեղի պատասխանատուներէն Յակոբ Սեւան «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին Զննելի տեղեկացուցած է, որ այս անգամ բանական լուրջ յաջողութիւններ արձանագրուած են: Հայ ժողովուրդի բարեկամ գործող եւ նախկին բազմաթիւ պատասխանողներ ու փորձեւորներ ելոյթ ունեցած են, նոյնիսկ այս հարցով սովորաբար բացասական դիրքորոշում ունեցող Իսրայէլի արտաքին գործոց նախարարութեան ներկայացուցիչը շատ դրական արտայայտուած է ճանաչման օգտին՝ նշելով, որ հայ - իրեական յարաբերութիւնները երթալով աւելի կը սերտանան: Ոչ մէկ դէմ ելոյթ եղած է այս անգամ:

Հայկական պատմա-հետազոտութիւնը կը ղեկավարէր Իսրայէլի մէջ Հայաստանի պատուով հիւպատոս Յովակ Մոմճեան, իսկ Հայոց պատմա-հետազոտութիւնը կը ներկայացնէր Կորին վարդապետ Պաղտասարեան, մնացածը տեղի Հայ Դատի պատասխանատուներն էին:

Նիստի արդիւնքով որոշուած է նախագիծը լիագումար նիստին դնել քննարկման, որպէսզի Հայոց տեղասպանութեան ճանաչման բանաձեւի հարցը վերջնականապէս Զննելի մէջ լուծուի: Որոշուած է նաեւ հարցը քննարկել Սեպտեմբեր 21-ին Հայաստանի Անկախութեան օրը: Երրորդ կարեւոր որոշումը կը վերաբերի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան, որուն խորհրդարանական յանձնաժողովը յատուկ յանձնարարութիւններ տուած է՝ աւելի խորութեամբ ուսումնասիրելու Հայոց տեղասպանութեան հարցը եւ փոփոխութիւններ մտցնելու նաեւ ուսումնական ծրագիրներուն մէջ:

## Մարզական

### ԻՐՐՈՒՄ ԼԻԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՍԿԱՆ Ա.ՅԱՆԳՐՈՒՄՆԻ ԴԱՐՁ ՇԻՐԱԿ ԵՒ ԱԼԱԾԿԵՐՏ ԱՊԱՐՈՎԵՑԻՆ ԻՐԵՆՑ ՏՈՍՍԵՐԸ

Իրրոբա Լիկի նախապատրաստական առաջին հանգրուանի դարձի մրցումներուն Հայաստանի երեք խումբերէն երկուքը կրցան հասնիլ երկրորդ հանգրուան: Կիւմրիի Շիրակը, որ երթի մրցումին իր դաշտին վրայ 2-0 հաշիւով յաղթած էր պոսնիական Չրիսյսքիին, դարձի մրցումին թէեւ պարտուեցաւ 1-2 հաշիւով, սակայն երկու մրցումներու արդիւնքով անցաւ յաջորդ հանգրուան: Մեշանովիչ տուգանային հարուածով եւ Ֆիլիփովիչ նշանակեցին երկու կողմը վերջին վայրկեաններուն Չրիսյս-



քիի համար, սակայն Շիրակի աստղ փղոսկրեայ ափուքցի ժան ժագ Պուկուհին 96-րդ վայրկեանին նշանակեց ճակատագրական կոլը: Ալաշկերտը, որ երթի մրցումին իր դաշտին վրայ 1-0 հաշիւով յաղթած էր Սկովտիոյ Սենթ Ճոնսթընին, դարձի մրցումին պարտուեցաւ 1-2 հաշիւով եւ օտար դաշտի վրայ նշանակուած կոլով անցաւ յաջորդ հանգրուան: ՕՊԱՐՈՒՄԻ ԲԱՏԱՎԱՅԻՆ ՍԵՆԹ ՃՈՆՍԹԵՆԻ ՀԱՄԱՐ, մինչ Նորայր Կեղալեան նշանակեց հաւասարութեան կոլը, իսկ Մաքթէյ նշանակեց դաշտի տերերուն երկրորդ կոլը: Իսկ Ուլիսը, որ երթի մրցումին Մալթայի մէջ 0-0 հաշիւով հաւասարած էր Պիրքիքարային հետ, իր դաշտին վրայ պարտութիւն կրեց 1-3 հաշիւով եւ դուրս մնաց յետագայ պայքարէն: Ռուս պաշտպան Զոնսթանթին Մարգոզով նշանակեց Ուլիսի միակ կոլը: Միքքոլի, Մագթթի խումբին կոլերը: Երկրորդ հանգրուանին Շիրակ պիտի մրցի Շուէտի Սոլաքաքի եւ Այ Զէյին դէմ, իսկ Ալաշկերտը պիտի մրցի Ղազախստանի Կայրաթին դէմ: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները (Շուգծուած են յաղթող խումբերը):

- **Կայրաթ** (Ղազախստան) - Տրվեսա Չվեգտա (Մերալիա) 2-1, երթ. 2-0,
- **Մլատնոսթ** (Մոնթենեկո) - Նեթի (Ատրալեյճան) 1-1, երթ. 2-2,
- **Տապալ** (Մոլտովա) - Ռենովա (Մակեդոնիա) 4-1, երթ. 1-0,
- Սուրբեքա (Մոնթենեկո) - **Տեպրեցեն** (Ռուսկարիա) 2-0, երթ. 0-3,
- **Սիպրոս** (Լաթվիա) - Պուտուքնոսթ (Մոնթենեկո) 0-0, երթ. 3-1,
- **Էֆ91 Տիւտեյան** (Լիքսեմպուրկ) - **Եու Սի Տի** (Իրլանտա) 2-1, երթ. 0-1,
- **Քապալա** (Ատրալեյճան) - Տիւմո Թիֆլիս (Կրաստան) 2-0, երթ. 1-2,
- **Նեմե Քալու** (Եսթոնիա) - Աքթոպե (Ղազախստան) 0-0, երթ. 1-0,
- **Թորփետո ժոտիս** (Պելառուսիա) - **Քուքեի** (Ալպանիա) 0-0, երթ. 0-2,
- **Օմնիա Նիկ** (Կիպրոս) - Տիւմո Պաթումի (Կրաստան) 2-0, երթ. 0-1,
- **Էլֆապրոկ** (Շուէտ) - **Լաթի** (Ֆինլանտա) 5-0, երթ. 2-2,
- **Ուլիս** (Հայաստան) - **Պիրքիքաթա** (Մալթա) **1-3, երթ. 0-0**,
- Տիւնիսկալի (Կրաստան) - **Պրոքսանի** (Ռումանիա) 1-3, երթ. 1-1,
- **Ինթեր Պաթի** (Ատրալեյճան) - **Լապի** (Ալպանիա) 0-0, երթ. 1-1,
- **Շահտիոն** (Պելառուսիա) - Կլեմալոն (Հիւ.Իրլանտա) 3-0, երթ. 2-1,
- **Պեռն** (Պուկարիա) - Ալթանթա (Լիթուանիա) 3-1, երթ. 2-0,
- **Օւ** (Նորվեգիա) - Շերիֆ (Մոլտովա) 0-0, երթ. 3-0,
- **Պեթաթ Երուս** (Իսրայէլ) - Օրտապասի (Ղազախստան) 2-1, երթ. 0-0,
- **Ռոզընապոկ** (Նորվեգիա) - Վայքինկուր (Ֆարո Կղզիներ) 0-0, երթ. 2-0,
- **Հայտնոք Սիլիթ** (Իրուաթիա) - Սիլեմա Զալե (Եսթոնիա) 6-2, երթ. 1-1,
- **Ալիուրն Նիկոսիա** (Կիպրոս) - Սաքսան Լունկա (Մոլտովա) 2-0, երթ. 2-0,
- **Էլ Ալ Զէյ** (Շուէտ) - Վի Փի Ես (Ֆինլանտա) 4-0, երթ. 2-2,
- **Սլովան Պրաթիպալա** (Սլովաքիա) - Եօրոփա (Ճիպրալթար) 3-0, երթ. 6-0,
- **Ռանտեպ** (Դանիա) - Սանթ Եուլիա (Աստորրա) 3-0, երթ. 1-0,
- **Լիզիթանոս** (Աստորրա) - **Ռեսթ Զեմ Եուլայթոթ** (Ալգիա) 0-1, երթ. 0-3,
- **Փիլիս** (Սլովաքիա) - Կլեթթորն (Հիւ.Իրլանտա) 3-0, երթ. 4-1,
- **Չրիսյսքի** (Պոսնիա Զեքեկ) - **Շիրակ Կիւմրի** (Հայաստան) **2-1, երթ. 0-2**,
- **Լոքոմոթիւ Չակրեպ** (Իրուաթիա) - Եյրպաս (Կալէ) 2-2, երթ. 3-1,
- **Լովէ** (Պուկարիա) - **Ելվալա** (Լաթվիա) 2-2, երթ. 1-1,
- **Վատուգ** (Լիխթենշթայն) - **Լա Ֆլորիթա** (Սան Մարինո) 5-1, երթ. 5-0,
- **Էս Ես Այ** (Ֆարո Կղզիներ) - **Լիւֆիլա** (Հիւ.Իրլանտա) 4-3, երթ. 0-2,
- **Փարթիզան Թիրան** (Ալպանիա) - **Սթեօսկոտսեթ** (Նորվեգիա) 0-1, երթ. 1-3,
- **Պալա Թաուն** (Կալէ) - **Տիֆերուս 03** (Լիքսեմպուրկ) 2-1, երթ. 1-3,
- **Ռապրոթիքի** (Մակեդոնիա) - **Ֆլորա** (Եսթոնիա) 2-0, երթ. 0-1,

## Թուրք Բեմադրիչը Սկսած է Տեղասպանութիւնը Ժխտող Ֆիլմի Նկարահանումները

Թուրք յայտնի բեմադրիչը Իսմայիլ Կիւնէշ սկսած է Հայոց տեղասպանութիւնը ժխտող ու 1915-ը պարզապէս ընդհանուր ողբերգութիւն ներկայացնող «Զարուան 1915» ֆիլմի նկարահանումները, կը գրէ «News.am»-ը:

Ինչպէս կը տեղեկացնէ թրքական «Սապահ»-ը, ֆիլմի նկարահանումներուն համար արդէն ստեղծուած են երկու քաղաքներ, որոնք նոյնութեամբ կը կրկնեն 1915-ի քաղաքները:

Ֆիլմի բեմադրիչը Իսմայիլ Կիւնէշ աւելի առաջ իրաժարած էր յայտնել ֆիլմի հովանաւորի անունը, սակայն շեշտած է, որ ֆիլմը մեծ պիտի ըլլի, որուն ծիրէն ներս հնարաւոր է իրականացնել նման մեծ ու ծախսատար աշխատանք: Ան նշած էր ֆիլմին մէջ պիտի նկարահանուին մօտ 300 դերասան, որոնց մէկ մասը յայտնի դերասաններ են:

Թուրք բեմադրիչը նշած է, թէ իր ֆիլմին մէջ ինք չի փորձեր ցոյց տալ թէ տեղասպանութիւն եղած է կամ հակառակը, այլ պարզապէս ցոյց կու տայ կառապանի մը պատմութիւնը, որուն յանձնարարած էին Կիրեսուկի մէջ ապրող 200 հայերու տեղափոխելը Հայկ, որուն ընթացքին կառապանը «անձնութիւնը» պաշտպանած է իրեն «վստահուած» հայերը պաշտպանելու աւագակներու յարձակումներէն:

Ան շեշտած է, թէ Կիրեսուկէն Հայկ երթալու ժամանակ տարբեր վայրերու մէջ ֆիլմի հերոսները ականատես կ'ըլլան կոտորածներու տեսարաններու:

Բեմադրիչը նշած է, թէ ֆիլմը կը նախատեսուի ցուցադրել 2016-ին:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՑԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՈՐ

### ԵՐՈՒՐԴ ԹՈՓՉԵԱՆ

Մեր թուականէն 104 տարիներ առաջ՝ 1911ին ծնած է հայ գրականագետ, բանասիրական գիտութիւններու թեկնածու, Հայաստանի մշակոյթի վաստակաւոր գործիչ, գրողներու միութեան անդամ եւ նախագահ Երուսաղիմ Թոփչեանը:

Ե. Թոփչեան ծնած է Սուրբաբայի գաւառի Էլջիար գիւղը: 1932ին աւարտած է Երեւանի Պետական համալսարանի պատմագրական հիմնարկը: 1935ին ուսուցչութեան պաշտօն վարած է Երեւանի գանձաւան դպրոցներուն մէջ, միաժամանակ իր ուսումը շարունակելով Լենինկրատի արուեստագիտութեան հիմնարկէն: 1935-1938 տարիներուն եղած է «Գրական թերթ»ի խմբագրի տեղակալ, իսկ 1939-1941 տարիներուն Արմֆանի լեզուի եւ գրականութեան հիմնարկի աւագ գիտաշխատող: 1941-1943 տարիներուն ծառայած է Խորհրդային բանակին, մասնակցելով հայրենական մեծ պատերազմին: 1943-1944 տարիներուն եղած է «Սովետական Գրականութիւն» եւ «Սովետ» ամսագրի խմբագիր: 1944-1946 տարիներուն եղած է Հայաստանի Գրողներու միութեան վարչութեան պատասխանատու քարտուղար:

Ե. Թոփչեանի գործերէն են «Վահան Տրեան», 1945, «Հոկտեմբերը եւ Հայ ժողովուրդի ճակատագիրը» 1965, «Վերածնունդ» 1977, «Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն», 5 հատոր եւ այլ բազմաթիւ գործեր:

Ե. Թոփչեան իր տարած ծառայութիւններուն համար ստացած է Հայրենական Պատերազմի երկրորդ աստիճանի, Աշխատանքային Կարմիր դրօշի եւ «Պատուոյ Նշան» շքանշանները:

Մահացած է 3 Սեպտեմբեր 1975ին, Երեւան:



# Մ ա ր օ ւ ր Կ ան

(Շարունակում Գ. Էջին)



- **Շլասք Վոդյալ** (Լեհաստան) - Սելիե (Սլովենիա) 3-1, երթ. 1-0,  
 - **Սիվաթաթ Թրոն** (Սլովաք.) - Օլիմպիկ Սարայեվո (Պոսն.) 3-0, երթ. 1-1,  
 - **Զուրաբ Բերիա** (Սլովենիա) - Վալդիսկուր Ռեյխալդ (Իսլանդ) 2-2, երթ. 1-0,  
 - **Եուրյե** (Սան Մարինո) - **Պրեկտալի** (Դանիա) 0-2, երթ. 0-9,  
 - **Ֆերենցվարոշ** (Հունգարիա) - Կո Հետ Իկլիզ (Հունաստ) 4-1, երթ. 1-1,  
 - **Չուբառիջի** (Սերբիա) - Տոմալ (Սլովենիա) 0-0, երթ. 1-0,  
 - **Վոլոտինա Լոմի Սառ** (Սերբիա) - Էմ Թի Զեյ (Հունգարիա) 3-1, երթ. 0-0,  
 - **Եակիեյունիա Պիալիսթոբ** (Լեհաստան) - Զրուոյա (Լիթուանիա) 8-0, երթ. 1-0,  
 - **Վալթթա** (Մալթա) - **Նիլթաուն** (Կալէս) 1-2, երթ. 1-2,  
 - **Էարոտիկ** (Սլովակիա) - Շեքոնիյա (Մակեդոնիա) 0-0, երթ. 1-1,  
 - Էյի Պի Թոսիսալըն (Ֆարո Կղզիներ) - **Թոթալ** (Լիթուանիա) 1-4, երթ. 0-3,  
 - **Սենթ Ճոնսթըն** (Սլովակիա) - **Վաշկեյու** (Հայաստան) 2-1, երթ. 0-1,  
 - **Սենթ Փաթրիկ** (Իռլանդ) - **Սքոնթո** (Լաթվիա) 0-2, երթ. 1-2,  
 - **Զեյ Ար** (Իսլանդ) - Զորե Սիթի (Իռլանդ) 2-1, երթ. 1-1, յետ երկրորդ ժամանակահատվածի:  
 - **Չեյիեյեյիթաթ Սարայեվո** (Պոսնիա Զերցեյ.) - Պալզան (Մալթա) 1-0, երթ. 2-0,  
 - **ԷՖ Էյի Զարֆ** (Իսլանդ) - Էս Ճեյ Զեյ Զեյսիսթի (Ֆինլանդ) 1-0, երթ. 1-0:

## ՀԻՄ.ԵՒ ԿԵՂՐՈՆ.ԱՍԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ

### ՄԵԶՍԻԶԵԸ ԵՒ ԹՐԻՆԻՏՏԱՏ ԶԱՂԹԵՑԻՆ

ԱՄՆ-ի մեջ տեղի ունեցող Հիսուսային եւ Կերոնական Ամերիկայի երկիրներու Ոսկե Բաժակի գումարի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

#### Գ. խմբակ.

- Թրինիտատ եւ Թոպակո - Կուաթեմալա 3-1,
- Մեքսիքա - Զուլա 6-0,

#### ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՄՐՏ. ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ. ՀԱՆԳՐՈՒՄ

#### Ա. խմբակ.

- Ուրախիա - Ֆրանսա 1-3,
- Յունաստան - Աւստրիա 0-0,
- Դասաւորում. 1-Ֆրանսա 6 կէտ, 2-Յունաստան 4 կէտ, 3-Աւստրիա 1 կէտ, 4-Ուրախիա 0 կէտ,

#### ԾՈՎԱՓԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՏԱՐԴԻ ԱՆՈՅԵՆԱՆ ԶՏՈՒՄԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ

Փորթուկալի մէջ սկսաւ ծովափի ֆուտբոլի աշխարհի ախոյեանութիւնը: Առաջին հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

#### Ա. խմբակ.

- Փորթուկալ - Ճափոն 4-2, - Արժանթին - Սենեկալ 4-3,
- Բ. խմբակ.**
- Իտալիա - Զոսթա Ռիքա 6-1, -Չուիլցերիա - Օման 5-2:

## ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ԿԱՐԵՒՐ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ստորեւ տեսնել շաբաթավերջի կարեւոր մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ խումբին դիրքը).

ԿԻՐԱԿԻ, 12 ՅՈՒՆԻՍ 2015	ԺԱՄ
<b>ԾՈՎԱՓԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՆՏԱՐԴԻ ԱՆՈՅԵՆԱՆ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ. ՀԱՆԳՐ.</b>	
Սպանիա - Մեքսիքա	15:00
Ռուսիա - Մատակապար	16:30
Թահիթի - Փարակուէ	18:00
Պրագիլ - Իրան	19:30
<b>ԵՐՈՊԱՅԻ ՄԻՆՉԵՒ 19 ՏԱՐԵԿԱՆ ԱՄՐՏ. ԶՏՈՒՄԻ 3-ՐԴ. ՀԱՆԳՐ.</b>	
Ֆրանսա (1) - Յունաստան (3)	21:00
Ուրախիա (4) - Աւստրիա (2)	21:00
<b>ՀԻՄ.ԵՒ ԿԵՂՐՈՆ.ԱՍԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ. ՀԱՆԳՐ.</b>	
Ճամայքա (2) - Զուլա (3)	01:30
Զոսթա Ռիքա (1) - Էլ Սալվատոր (4)	04:00
<b>ՌՈՍԻՏՈՅ ՄԻՆԸՐ ԲԱԺԱԿ</b>	
Չեխի Սանթ Փեթրոսպոլ - Լոքոմոթի Մոսկուա	18:00
<b>ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՈՅԵՆԱՆ ԲԱԺԱԿԻ Ա. ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Լոս Անճելոս Կալաբրի (ԱՄՆ) - Ամերիքա (Մեքսիքա)	06:30
<b>ԱՐՄԱՆԹԻՆ ԱՆՈՅԵՆԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Ունիոն Սանթա Ֆե (11) - Սան Լորենցո (1)	01:10
Հուրաքան (24) - Տեֆեսա Ի ժուսթիսիա (27)	02:30
Լանուս (13) - Աթլետիքո Ռաֆայելա (26)	03:30
Նուեվա Շիբակո (30) - Զոլոն (21)	20:00
Ինտիփետիսթեթ (16) - Օլիմպիո (28)	21:00
Նիլզ Օլտ Պոյո (9) - Ռասինկ Զլուպ (3)	23:00
<b>ՊՐԱԶԻԼԻ ԱՆՈՅԵՆԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Փոնթ Փրեթա (10) - Աթլետիքո Միլետո (1)	03:00
Սաօ Փալո (7) - Զորիթիա (18)	17:00
Ֆլամենկո (13) - Զորիթիքո (4)	22:00
Զրուպեյո (12) - Կոյաս (14)	22:00
Աթլետիքո Փարանետ (8) - Ֆլումինետ (2)	22:00
ժոնիվիլ (20) - Ինթերնասիոնալ (16)	22:00
<b>ԱՓՐԻԿԵԻ ԶԵՄՓԵՆԸ ԼԻԿԻ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Ալ Զիլալ Օմտուրման (2) - Սմուհա (1)	22:00
<b>ԱՓՐԻԿԵԻ ՖԵՏԵՐԱՍԻՆԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Սթատ Մալիէն Պամպո (3) - Ալ Աիլի (1)	19:30
<b>ԹԵՆԻՍԻ ԱՆՂԻՈՅ ԲԱՅ ՄՐՅԱԿՆԵՐԻ ՏՐՈՑ ԱՄՐՏԱԿԱՆ</b>	
Ժամը 15:00-Էն սկսեալ Ուիմպլոնի ակումբի դաշտերուն վրայ (Ապու Տիապի Սփորց Կայանէն):	
<b>ՀԵՏԵՆԱՐԸՆԻ ՖՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱԿԱՅԵ 9-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Ժամը 16:00 Էն սկսեալ Ֆրանսայի Կաննը քաղաքէն Փիլմէ-Էթ, 28 ըմ, խմբային ժամանակի դէմ մրցում (BeIN Սփորց Կայանէն):	

ԵՐԿՐՈՒՄ, 13 ՅՈՒՆԻՍ 2015	ԺԱՄ
<b>ՀԻՄ.ԵՒ ԿԵՂՐՈՆ.ԱՍԵՐԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐ.</b>	
Թրինիտատ եւ Թոպակո (2) - Զուլա, (4)	01:30
Կուաթեմալա (3) - Մեքսիքա (1)	04:00
<b>ԱՐՄԱՆԹԻՆ ԱՆՈՅԵՆԱՆ 16-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Կոտոյ Զրուպ (22) - Զրուպեթո Տէլ Նորթ (25)	00:15
Սարմիէթո (19) - Պոքա Ճինիլո (2)	03:30
Ալտոսիլի (14) - Ռոզարիո Սանթալ (5)	00:00
<b>ՊՐԱԶԻԼԻ ԱՆՈՅԵՆԱՆ 13-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Սփորթ Ռեյսֆեթ (5) - Փալմեյրաս (6)	00:30
<b>ԱՓՐԻԿԵԻ ԶԵՄՓԵՆԸ ԼԻԿԻ ԶՏՈՒՄԻ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ</b>	
Մադրեալ Թեթուան (3) - Մազեմպե (4)	01:00

### ԹԵՆԻՍ ՈՒՄՊԼԵՏՆԻ ՄՐՅԱԿԱՅԵ ՈՒԼԻԵՐԱՅ ԵՒ ՄՈՒԿՈՒՐՈՒՄ ԶԱՍԱՆ ԱՄՐՏԱԿԱՆ

Մեծ Սաղաւարտի երրորդ Ուիմպլոնի մրցաշարի կիներու մրցաշարի կիսաարտական հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

Թի 1 դասուած ամերիկացի Մերեա Ուիլիզմ յաղթեց թի 4 դասուած ռուս Մարիա Շարապովային 6-2, 6-4 հաշիւով, իսկ, թի 13 դասուած լեհ Ալիքսեա Ռատուանսքան պարտուեցաւ թի 20 դասուած սպանացի Մուկուրուզայէն 2-6, 6-3 եւ 3-6 հաշիւով: Շարապօ օր աւարտական մրցումին Ուիլիզմը պիտի մրցի Մուկուրուզայի դէմ:

### ՀԵՏԵՆԱՐԸՆ ԳՐԱՆՍԱՅԻ ՇՐՋԱԿԱՅԵ ԶՏԵՆԷՔ ՇԱՅԵՄԻ ԶԱՆԳՐՈՒՄ

Հինգշաբթի օր տեղի ունեցաւ Ֆրանսայի Շրջավազի վեցերորդ հանգրուանը Ֆրանսայի Ապպելի քաղաքէն մինչեւ Լեօ Զալլոն քաղաքը: Մրցումին հեռադիւրսին էր 191,5 քիլոմէթր: Չեխ Չտենէ Սթիպար, Ի Զիու Էս խումբէն գրաւեց առաջին դիրքը արձանագրելով 4 ժամ 53,46 վայրկեան, երկրորդ դիրքը գրաւեց սլովացի Փիթըր Սակսն՝ 2 երկվայրկեան ուշ եւ երրորդ դիրքը՝ ֆրանսացի Պիլան Զոքար 2 երկվայրկեան ուշ: Առաջատար գերմանացի Թոնի Մարթինը վերջին քիլոմէթրին ենթարկուեցաւ արկածի մը, աւարտեց մրցումը, սակայն կրկալ ըլլալ որ քաշով շրջավազէ:

Ընդհանուր դասաւորում.

1- Թոնի Մարթին (Գերմանիա, Ի Զիու Էս) 22:13.14 ժամ, 2- Զրիս ֆրու (Բրիտանիա, Սքայ) 12 երկվայրկեան ուշ, 3-Թիմէյ Վան Կարտըրեն (ԱՄՆ, Պի Էմ Սի) 25 երկվայրկեան ուշ:

### ՊԱՏԵՑՊՈՂ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՆՈՅԵՆԱՆ ԼԻԲԱՆԱՆ ԶԱՍԱՄ ԶԱՌՈՐԴ ԱՄՐՏԱԿԱՆ

Եգիպտոսի մէջ տեղի ունեցող Արաբական Երիտասարդական Պատեցպոլի ախոյեանութեան առաջին մրցումին Լիբանան յաղթեց Իրաքին 82-56 հաշիւով: Երկրորդ մրցումին կրեց պարտութիւն Եգիպտոսի հաւաքականէն 70-72 հաշիւով: Երրորդ մրցումին Լիբանան յաղթեց Արաբական Միացեալ Էմիրութեան հաւաքականին 75-69 հաշիւով: Իսկ չորրորդ մրցումին յաղթեց Զուլթի հաւաքականին 81-51 հաշիւով եւ ապահովեց քառորդ աւարտական հանգրուանի տոմար:



**Ռամկավար Ազատական Կուսակցութիւն**  
**Պայքար Ակումբ (Ընկերակային Յանձնախումբ)**

**Դաշտագնացութիւն (picnic)**

**դէպի «Մունթազահ Ալ Անհար» Մէյրուպա**

Մասնակցութեամբ սիրուած երգիչ՝  
**Յովիկ Թաֆրանեանի**

Ընկերակցութեամբ՝  
**Յովիկ Ատուրեանի**

**Տեղի կ'ունենայ Կիրակի, 19 Յուլիս 2015-ին:**

*(Երթելու ապահովում)*



Այցելեցէ՛ք  
 Կարգացէ՛ք  
 Տարածեցէ՛ք

[www.RagMamoul.net-ը](http://www.RagMamoul.net-ը)



**La Solderie DE LUNETTES**

Lunettes Solaires et Médicales  
**1400 modèles à partir de 10\$**

Autoroute Jdeiden - Tél. (01) 870016 - Pres Boghos Optic

## ՅԱՅՏԱՐՈՒԹԻՐՆ

Լիբանան-Հայաստան բարեկամութեան ընկերակցութիւնը ուրախ է տեղեկացնելու, որ 2015թ. Օգոստոսի 17-21 Արցախի Շուշի քաղաքում կը նշուի 4-րդ Համահայկական Ամունքի փառատոնը: Այն կազմակերպուում եւ հովանաւորուում է «Աւան Շուշի Փլազա» հիւրանոցի, ՀՀ Սփիւռքի Նախարարութեան եւ ԼՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան կողմից:

Հաշուի անշեղ փառատոնի երեք նախորդ տարիներին յաջողութիւնը, այս տարի հրաւիրուել է 8 երկրների՝ Հայաստան, Արցախ, Լիբանան, Իրան, Կրաստան (Ջաւախք), Պելաճուս, Ռուսաստան եւ ԱՄՆ, 8-րդ դասարանից մինչեւ 12-րդ դասարանի աշակերտներ, որոնք ոգեւորութեամբ եւ մեծ սիրով են վերաբերում հայկական փոզգային:

Իւրաքանչիւր երկիր կարող է ներկայացնել աշակերտներ հետեւեալ երեք տարիքային խմբերում՝

- 1) 8-րդ եւ 9-րդ դասարանիցներ (13, 14 տարեկաններ)
- 2) 10-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարանիցներ (15+ տարեկաններ)

Իւրաքանչիւր երկրի հայեցողութեան է թողնուում ընտրելու մրցոյթի մասնակիցներին:

Յաւելեալ տեղեկութիւնների համար խնդրում ենք դիմել Պր. Սարգիս Գալստեանին:  
 Հեռ.՝ +374 477 31599 կամ +374 97 242064  
 Ելեկտրոնային նամակի հասցէ. Avanzplaza@hotmail.com կամ Avanshushi@hotmail.com

### Վահան Թեքեան Վարժարան

**Յայտարարութիւն**

**2015-2016 Կրթական Տարեշրջան**

- Վերամուտ**  
 2015-2016 կրթական տարեշրջանը պիտի սկսի երեք Հանգրուաններով.  
 ա.Միջնակարգ 9. (Պրէօլէ)՝ Հինգշաբթի, 10 Սեպտեմբերին:  
 Բ.Միջնակարգ (7-րդ, 8-րդ) եւ Նախաընթաց՝ Հինգշաբթի, 24 Սեպտեմբերին:  
 Գ.Մանկապարտէզ՝ Ուրբաթ, 25 Սեպտեմբերին:
- 2015-2016 տարեշրջանի արձանագրութիւնները կը շարունակուին ամբողջ Յուլիս ամսուան երեքշաբթի օրերը ժամը 9:00-1:00, իսկ լրացուցիչ արձանագրութիւնները՝ Զորեշաբթի, 9 Սեպտեմբերին մինչեւ Զորեշաբթի, 23 Սեպտեմբեր 2015, դարձեալ առաւօտեան ժամը 9:00-1:00, բացի Նորաթի եւ Կիրակի օրերէն:
- Նորիկ աշակերտներ պարտին իրենց Հնա բերել.  
 ա. Նախորդ դպրոցի վիճակագրոյցը  
 Բ. Անձնագրի լուսպատճէն  
 Գ. Հրուանկար  
 Դ. Նախորդ վարժարանի վաւերացուած պետական թիւ  
 Ե. Բժշկական տետրակը
- Վերաբնութիւններ տեղի պիտի ունենան երեքշաբթի, 1 (Նոյեմբեր և Ընկերային գիտութիւն) եւ Զորեշաբթի, 2 Սեպտեմբերին (Ուսողութիւն և Գիտական նիւթեր) առաւօտեան ժամը 8:00-ին:
- Ամբան շրջանին, Տնօրէնութեան կրնաք դիմել ամբողջ Յուլիս ամսուան երեքշաբթի օրերը, կ.ա. ժամը 9:00-1:00: Գրասենեակները փակ պիտի մնան ամբողջ Օգոստոսի ընթացքին:
- Նորութիւն**  
 ա) 2015-2016 տարեշրջանին վարժարանի նորութիւնը կ'ընդգրկէ օտար Հայաստանի մէջ ունեցող աշակերտները զիջը մնալու լիբանանեան կրթական ծրագրէն: Հետաւարար՝ անոնք պետական քննութիւն չեն անցնեն:  
 (յաւելեալ մանրամասնութեան համար դիմել վարժարանի քարտուղարութեան)  
 Բ) Մանկամտուրը բաց է և կ'ընդունի 1.5 տարեկանէն սկսեալ փոքրիկներ առաւօտեան ժամը 7:30 -էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 2:30 կամ մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00 (յատուկ Համաձայնութեամբ):



**ANTOINE SALIBA**  
 WORLD OF JEWELRY

**Կ ' Ո Ւ Զ Ո Ւ Ի Ի**

ԱՆԹՈՒՆ ՍԱԼԻԲԱ ոսկերչական հաստատութիւնը իր 2ուրի մասնաճիւղին համար կարիքը ունի ոսկերչի (սե-տեքեր) եւ ոսկի փայլեցնող (ծիւս ընող) վարպետներու:  
**Հեռ.՝ 76-777543**  
 Հետաքրքրուողները կրնան իրենց Կ/Վ-ն դրկել՝  
**Email: rawad@antoinesaliba.com**

**Our e-mail addresses are:**

zartonkadl@gmail.com  
 zartonkdaily@yahoo.com  
 website: www.zartonkdaily.com

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատարմութեամբ բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: ՚նտեաւարթ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամբէ անկախ սպորդած վրիպակներու պարագային, կ'ապաւինիք յօդուածագիրներու եւ մեր ընթերցողներու ներողամտութեան: